


ՔԱՐԵՆԳԻՆ
Մ. ՆԱԶԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ
Տարեկան \$ 1.50
Վեցամսեայ 0.85

ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Գրանք
ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Խմբագրութեան զբոսը
Նամակ կամ ծրար ետ
չեն վերադարձուիր:

ԳԻՆ 3 ՍԷՆԹ:




Չ Ա Յ Ն

Հայրենեաց

ՇՄԱԹԱԹԵՐԹ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն, Գ Ի Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն



ՄԵԿԱՆԻԿ
AN ARMENIAN WEEKLY.
18 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

ՀԱՍՏԻ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at
Worcester, as Second - Class
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ՔԻՉ ՄԸ ԱՌՈՂՋ ՄՏԱՅՈՒՄ

Ինչ որ մասնակց կը սերմանէ (Բարի թէ չար, բանաւոր կամ անբանաւոր) աւելնի ալ ժողովուրդին մէջ իրենց ենթակայ հող մը կը գտնեն: Այս գիտնալով է որ մեր գրացի թերթին անցեալ թուոյն հիւանդ մտքէ ելած խմբագրականին վարակիչ ազդեցութեան գէտ հակասեցողական դարման մը սալ հարկ համարեցինք:

Այդ յոգեածը հետեւեալ հարցը կը նետէ հրատարակ «Ո՞րն է աւելի կենսական, յեղափոխութիւնը թէ բարեգործութիւնը... Հայ թէ, գէնք հայ ժողովուրդին համար»:

Յօդուածագիրը յեղափոխութեան հաշտին հայ սովետներուն տրուած պատասխանի մը հարց խորհուրդ նպատակով՝ հեքնութեան սպառ կը նետէ բարեգործութեան սրտին, կըսէ— «Հաւատարմութեանը թէ բարեգործութիւնով ոչ թէ միայն մարդասիրական գործ մըն է որ կը կատարենք. այլ և մեր հոգիները կապահովենք յաւիտեանական աշխարհի բոլոր պատահականութիւններուն (?) դէմ...»:

Նախ հարցունենք թէ ո՞ր մէկ հայն է Ամերիկայի մէջ որ (Այդ թերթին ծառայական ոճը գործածելով) գալիք աշխարհի դրամատեսը տոկոսին տոկոսովը գանձ դնելու անձնասիրութեան մը մղուած՝ իր հայրենեաց մէջ գերեզմանին եղբրը հողը զգացող կարօտանքներուն կտորիկ մը հացի գին կուտայ. ո՞ր հայն է որ այս նուիրական ձեռնարկին մէջ իր պաշտելի հայրենիքը անազորոյն սովին ճիրաններէն ազատելու պարտաճանաչութիւնը չէ որ ունի:

Սխալ չհասկացուելու համար ըսենք թէ մենք ալ Հաւատարմութեանը որ հայ ժողովուրդը իր արուեստական ու անվերջ ազդեանքին փրկելու միակ ու արմատական միջոցը յեղափոխութիւնն է, որը, սակայն, պէտք չէ որ ժողովուրդին ձեռքէն իւր անոր կենսապահիկ երկրի պատասխանի մը հարցը: Մենք կը հակասեցունք մեր խնդրոյ նկատարկած յօդուածին այն ոգին, որ շեշտելով թէ մեր Հայաստանի սովետներուն զրկած հացի գինը մեծ մասամբ կը յափշտակեն Սուլթանին գայլի վոհմակները. ատով հարուածներ կ'իջեցունէ այն թշուառներուն բրդով մը հաց հասցունելու կէս արթուն զգացումներուն: Ու իր այդ պատասխանելի փաստարանութեան ու ժողովուրդի գիտումով. կը ոչ— «Ամենք ալ (Ամերիկացի բարեգործները) երբ տեսան թէ իրենց տուած եղբրը և ցորենը քիւրա աւազակները հարստացնելու միայն կը ծառայէին, դարեցնուցին այդ օգնութիւնը և ատով... անուղղակի խոշոր գոս մը ստովին մեզի, թէ ինչ ժողովուրդը որ իր եզն ու վարուցանը պատասխանելու անընդունակ է արժանի չէ օգնութեան...»:

Թող օտարները ատանկ մտածեն. սակայն ժողովուրդ մը որ անօթութիւնէ կմարքացած է. որ իր կենդանի վերջին կայծովը սովին դէմ կը մաքառի, ինչ ոգիով ու ինչ ուժով կարող պիտի ըլլայ գէնքը վերցունելու և անով կուսմիցելու, ո՞չ ապաքէն բանակի մը համար հացն ու ջուրը այնքան կենսական են որքան գէննքն ու ռազմա մթերքը. ինտուր կարելի է մին նախագահել միւսէն. կուշա մարդը զեռ կարող է քար և փայտ վերցունել թշնամիին դէմ. սակայն ինչ կարեւորութիւն ունի հրացանը կրամետ ու թերեւս դիակնացած ժողովուրդին քովի վրէժ, մանաւանդ երբ նա անօթութեան մահատուեր ուրուականներէն հալածուած կը ձգէ իր տունըն ու սեղոնը, կը ձգէ իր մարտիկ հողը ու կը փախչի օտար աշխարհներ երբ երկիրը անմարդարնակ դառնայ. գէնքը որո՞ւ պիտի տաս սր կուրի:

Ու Հայաստանէն «Հայ հայ» ազգազոր ազդեցող ձայններուն ո՞րքան գուհարմ տուաւ Ամերիկայի հայութիւնը. ինչ քան դրամ տուած ենք որ այդ այդ միտք ու սիրտ պարտորող հարցը հրատարակ կը նետուի, «Երկրագործութիւնը աւելի կենսական է թէ, բարեգործութիւնը հայ թէ գէնք», (???)

Հոս անգը չէ՞ որ ըսենք մեզի ամէն բանէն առաջ կենսական է առողջ մը մտածումը:

Երբ առողջ մտածենք, պիտի ըսենք հաց ալ. գէնք ալ. մին միւսին չափ կարեւոր և հացը աւելի կենսական. թող ապրի ժողովուրդը, զի ապրողն է միայն որ կրնայ կուրի:

Երբ վերջ տանք մեր տենդային մը տաճուամբնուն, յայտնաւ տեսնք սովատանջ ժողովուրդին պատասխանի մը հացին դպչելու, գէնք հայթայթելուն ալ ճարը պիտի գտնենք:

Երբ առողջ մտածենք, պիտի տեսնենք թէ հայ ժողովուրդը յեղափոխութեան դրամ չտար, ո՞չ սրով հետեւ անօթիներուն հացազին քանի մը սէնթ նետած է, նոյն իսկ ո՞չ որովհետեւ սկզբունքով չհաւատար յեղափոխութեան, այլ որովհետեւ կը տեսնէ որ յեղափոխականները զիրար կուտեն. զիրար կանուանարկեն, մէկմէկ մատնիչ, խորքալ և և կը ներկայացնեն. հետեւաբար մէկնքէն ալ կը զգուրի ու յեղափոխական կուսակցութիւններուն իրարու երեսին նետած յանձնարարականներուն համեմատ կը վարուի ամբողջին հետ ալ: Եւ ոչ մէկին կը վստահի:

Ինչ առաջ հարկ անհրաժեշտ է յեղափոխական հրատարակ մաքրել ու զանդակայ պատկառելի և վստահելի ներկայացունել ժողովուրդեան աչքին:

Այս օր մեր ձեռքը անցաւ վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան բն

րան եղող Մարտ թերթը, որուն մէջ մեր սրտին լաղ ձանքը լեցունող պաշտօնական յայտարարութիւն մը կարդացինք: Այդ յայտարարութիւնը մեզի այն վստահութիւնը ներշնչեց թէ. Հնչակեան կուսակցութիւնը ալ «Ըսի, ըսուանե՛րու մթին խօսքերով ժողովուրդեան շեփոթեալ միտքը աւելի ևս խառնաշփոթեալ չպիտի ծառայէ, այլ այս գայթակղութիւններուն վերջ պիտի տայ կարուկ կերպով. դանակը բուն վերջին վրայ պիտի դնէ: Ահա յայտարարութիւնը. «Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը ստացած է Դաշնակցական կուսակցութեան բերան Դրօշակ թերթին յաւելուածը, Հնչակեան կուսակցութիւնը ամենամեծ խտուրթեամբ և անաշտութեամբ պիտի կատարէ իր պարտականութիւնը այն ամբողջութեամբ մասին զոր այդ յաւելուածը կը պարունակէ»:

Պատուոյ աստանի առջեւ մաքրելու են յեղափոխական գայթակղութիւնները, և ժողովուրդը կենանք կ'ուտայ մաքուր յեղ. կուսակցութեան մը. ժողովուրդին խախտուած վստահութիւնը շինելու է:

Թերթը կառավարութեան պէտ չընենք որ. փոխանակ երկրին արդիւնաբերութեան միջոցներ տալու, եղանակ ալ կը չբացունէ, և իր անօթի սրտը լեցունելու համար ժողովուրդին ձեռքի պատասխանի մը հարցը, կենսապահիկը, կը յափշտակէ:

Ինչո՞ւ աչքը ծակ մարդոց նման չարելով նայինք ժողովուրդին իր կրօնական պիտոյից համար տուած դրամներուն և անուանենք «կենդեցական թաւան», ինչո՞ւ ազգային ուրիշ պարտականութիւններուն դէմ խօսինք. ինչո՞ւ փոխանակ ատոնց՝ չլանանք ժողովուրդին բարքը մշակելու, անոր գիտակցութիւնը պայծառացունելու, անոր պարտաճանաչութեան ոգին հրահրելու այնքան որ նա իր ամէն կարգի պարտականութիւնները լիովին կատարելու տրամադիր գտնուի. և երբ ժողովուրդը հանրային գործն կուտենք այդ բարձրութեանը հասնի. մտնուանք երբ Ամերիկայի հայութիւնը այնպէս բարոյականանայ որ դրամական անարգ մոխուրներէ ետ կենայ և հարեանսիրական խանդէն մղուած նոյն իսկ անկարեւոր ծախսերու խնայութիւններ ընէ. նպատակաւ որ կարելի եղածին չափ շատ օգնէ հայութեան և հայրենեաց վերականգնումի գործին. այն աստեւ ահա նա ընդունակ և կարող կըլլայ պատկելու կրօնասիրին ալ զբարսիրին ալ. սովեալին ալ. յեղափոխականին ալ փափաքները:

Ամերիկայի մէջ 15,000 էն աւելի հայ կը հաշուի: Եթէ առենք ատոր միայն 10,000 ը, ապահովաբար կրնանք ըսել թէ իւրաքանչիւր անհատը կարող է շարժական առնուազն 25 սէնթ յատկացնել

ազգային նպատակներու. յորժամ կը գոյանայ տարեկան 130,000 առարկի ահագին գումարը, և ատով ինչե՞ր չենք կրնար ընել:

Ահա թէ ինչ ահագին հնարաւորութիւն կայ Ամերիկայի հայութեան ծոցին մէջ: Այդ հնարաւորութիւնը իրազօրծելու հետամուտ լինելու ենք: Ներկայիս Ամերիկայի հայութիւնը հազիւ տարեկան 5,000 առարկի անհատ գումարը կուտայ Մայր երկրին դանազան կարօտանքներուն, չարժեր ատոր մատակարարութեանը մասին անձա և գայթակղելից հարցեր յարուցանել. ըսինք թէ ինչպէս այդ գումարը առնուազն 130,000 առարկի հասցունելու կարելիութիւնը կայ, ուրեմն այդ մեծ ու երանաւէտ վարձանին նայինք, առողջ մտածումներով:

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

Նամակ ներպրիտորթէն Մարտ 31

Ուրախութեամբ կուգամ խօսուանել Ձայն Հայրենեացի ընթերցողաց թէ տեղս կը գտնուի 30 ի չափ հայեր միայն որոցմէ ամէնքն ալ, այդ թէ կին. անգամ են Որբայինամ Ընկերութեան:

Թուէս ամիս մը առաջ տեղւոյս մէջ հրատարակային ժողով մը ունեցանք ուր ատենախօսեցին Արժ. Մաշտոց վարդապետ ու Պրն. Կ. Մինասեան, որոց երկուքն ալ շեշտեցին մեր որբերը խնամելուն ազգաչէն. պարտուց ու յեղափոխական կազմակերպութեան հարկին վրայ:

Սոյն ժողովոյ մէջ տեղի ունեցաւ որբայինամի անգամագրութիւնը ու ընտրուեցաւ հինգ անձերէ բաղկացած վարչութիւն մը. որք են Պ. Պ. Ռ. Մարկոսեան. Ս. Ղևնդ. Խ. Թազարեան. Պ. Քէլէշեան և Յ. Քէլէշեան:

Պարոն յը Յ. Անանեան ու Կ. Եղօեան միասին որբի մը որբեգրութիւնը յանձն առին:


ԱՐԱՊ

ՍՈՒՏԸ ՇԻՆՈՂԸ ԱՒԵԼԻ ՀԱՒԱՍՏԱՐԻՄ Է

Մարդ մը իր ծանօթներէն մէկին կը հանդիպի և զարմանքով կը հարցունէ «Ձե՞ որ դու մեռած էիր»: Դիմացելը կը պատասխանէ «Ահա կը տեսնես որ ողջ եմ»: «Բայց այն մարդը որ ինձ ըսաւ թէ դու մեռեր ես. քեզմէ հաւատարիմ էր», կը կըրկնէ առաջինը:

Շնթիցի վարժապետը իր անունին վըրայ կուսակցական ազատ հաշիւներ մաքրելու նպատակաւ նիւ Երբ թերթին զրկուած սուտը հերքեց. սակայն այդ տարօրինակ թերթը այդ հերքմանը «կուսակցական հոտ» չտեսնո՞րք և քիմի ֆլորիֆորմ արուելու պէս՝ զուրբ դարձեր է. խեղճը... ատանկ բաներու բողբոջին անվարժ զ՞ ու շախի կըլլայ... (Ինչ ալ սուր քիմի ունի եղեր) ու չկրնար հաւատալ թէ, յիշեալ հերքումը մը տուողը ինքը Շնթիցի վարժապետն է, որովհետեւ անոր վրայ սուտը չիւղղներ անկէ աւելի հաւատարիմ զ՞ ու այդ տարօրինակ թերթին համար:

Դեռ ինչ երգիծանքներ պիտի լսենք:



Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ
ՆԻՒՆՈՐԻ ԶՍԵՎԱԿԱՆ ԵԿԷՂԵՑԻՆ
110 ՈՒԼՍԹ 41 ԲԴ. ՓՈՂՈՑ
ՊՐՕՏՈՒԻ ՄՕՏ

ԲԱՑՈՒՄԻՆ

Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ Զայիական Եկեղեցւոյ
Նիւն-Յորթի

Աղագային նախանձարեղութեամբ
լի, կրօնական քաղցր և հրատարակչ
պատրաստութեամբ մը տակ հազար
վերադարձած՝ կը փութամ համառօտ
նկարագրել քաղաքին Զայիական Եկե-
ղեցւոյ բացումը, որն իր պարզութեան
և ան սեթեւեթութեան մէջ իսկ՝ օրինա-
կելի հոգեկան և բարոյական շատ մը
գաւառ կը պարունակէր:

Նախ ազնիւ ընթացողին հետաքրք-
րութիւնը յազանցելու համար ըսեմ թէ
այն Եկեղեցւոյ շէնքը որ կը գտնուի 110
Ուլսթ 41 րդ. փողոց Պրօտէի ու 6 րդ
փողոցի անկիւնը: Զայիական կեդրոն
մը ըլլալու համար ամէն յարմարութիւն
ունի նախ՝ քաղաքին գրեթէ կեդրոնը
լինելով ամէն կողմի հայոց համար դիւ-
րին կը լինի Եկեղեցի գալ երկրորդ և
Եկեղեցական պաշտամունքը կը կատար-
ուի առաւօտեան ժամը 10-12, որ ատեն
ամեն մարդ կրնայ ներկայ գտնուիլ: Երկ-
րորդ թէ Եկեղեցին և թէ շէնքը բոլորով
վին մեր արամազդութեան տակ լինե-
լով ամէն օր և ամէն ժամանակ կրնանք
զորմանել ժողովներու, գումարաւմե-
րու սոյլ և այլ հանդէսներու: Զորորդ
յարակից շէնքին մէջ երկու հաս յարմար
ժողովարաններ կան, որ կարելի է հա-
մախմարել, Լսարան, գրքարան, Զայիա-
կան Միութիւն և այլ ազգային միութ-
իւններ, որով իմի հաւաքուած կը լի
նի հայ երիտասարդութիւնը և միջոցներ
ու գերութիւն կը մատուցուի անոնց
մտաւոր և բարոյական զարգացման: Հին-
գերորդ յարակից շէնքին մէջ կը բնա-
կի սեղանայ հոգեւոր հովիւը, զոր իհար
կուոր զգեստ գտնելը շատ դժուրին կը լի
նի ժողովողներ, վեցերորդ այժմ ուրա-
խութեամբ կը ըսենք այս շէնքին մէջ
փոքրիկ աղայոց համար վարժարան մը
և երիտասարդաց համար կիրակնօրեայ
գաւառան բանալու միջոցներ ձեռք կառ
նուին Շէնքին տարեկան վարձքն 1200
տօլար է:

Ահա առաջին սոյն այս Եկեղեցւոյ բա-
ցումը կատարելու համար էր, որ նորին
Սրբազանութիւն Առաջնորդ Զայրը յատ-
կապէս հրահրուած էր Ս. Պատարագ
մատուցանել, այս օր կիրակի Ապրիլ 1 ին
առաւօտեան ժամը 10 րդ քաղաք անցած
պիտու Ս. Պատարագի խորհուրդը և վեր
ջայտ ժամը 11,50 ին: Մօտ 400 ժողո-
վուրդ գրուած էր Եկեղեցւոյ նորաշէն
նստարանները: Յաւարտ Ս. Պատարագի
Սրբազանը նկատի ունենալով ժամանա
կի սղութիւնը համառօտի բացատրեց
թէ ինչպէս Նիւ Յորթի Զայոց հոգեւոր
միութեամբ համար յատուկ շէնք
մը ունենալու պէտքը խիստ զգալի և
զգացարար էր: Թէ՛ Եկեղեցական պաշտօնէից
պարտաւորութիւնն էր ժողովողներուն հոգ
ւոյն և մտաց քաղցն ու ծարաւը յազանցը-

նելու միջոցներ հայթայթել, թէ հայ տա-
րագիր ժողովուրդը այս օտար երկրի
մէջ իր բոլոր թշուառութեանց սփոթանք
իւր Եկեղեցին ունի, թէ ինքն իրեն հա-
մարտու առաջի Աստուծայ միշտ իւր
նշանարանն ըրած է հայ ժողովողներ
բարոյական և հոգեւոր միութեամբ իւր
հայթայթել, և թէ ճիշդ այդ փոփոքա
քանօք էր, որ ինքն պատճառ եղաւ այս
Եկեղեցւոյ վարձուելուն, որուն սակայն
բացատրիկ ծախքերն անկախուած էն քիչ
մը աւելի լինելով, Նիւ Յորթի հայ ժո-
ղովուրդեան կը մնար գնահատել այս կա-
րեւոր և օգտաշատ ձեռնարկը և ջա-
նալ օգնել իւր առատաձեռն նուիրատու-
ութեամբ, Սրբազանը յայտնելէ յետոյ
թէ ինչոց անտի ազգային Եկեղեցիք,
վանօրայք և վարժարանք պահուած են
և կը պահուին ժողովողներուն տուրքով
միայն, յոյս յայտնեց թէ Նիւ Յորթիքս
ալ պիտի աշխատեց ցոյց տալ թէ հե-
տեւող ենք մեր նախնեաց գովելի սո-
վորութեանց, գործնականապէս իրաջ
բերելով մեր սէրն ու փոփոքը դէպի
Եկեղեցին և դէպի քրիստոնէութիւնը
մանաւանդ, և չի թողուլ որ ամբողջ
նիւթական այս բնօր ծանրանայ քաղա-
քին մի քանի հարուստ ազգայնոց վրայ,
որք արդէն պարտաստ են լիաբուռն աւա
Եկեղեցական և ազգային ամէն կերպ
պէտքերու համար: Սրբազանը իր խօս-
քը լրացնելէ առաջ իրեմ հրահրեց հո-
գարարութեան Ատենապետ Տիար Յով-
թաւանանանը, որպէսզի ինքն ալ համա-
նօտիւ բացատրէ եղած ընթացիկ ծախ-
քերը և սկիւր հանգանակութիւնը կատա
րել:

Տիար Թաւանանան քանի մը խօսքով
բացատրելէ յետոյ թէ մասնաւորապէս
ինչ բացառիկ ծախքեր եղած են, կար-
դաց նաև ոմանց կողմանէ կանխուա ե-
ղած նուիրատուութիւնները և ապա ձեռ-
նարկեց հանգանակութեան: Տիար Թաւ-
անանան նախ Սեղանի ծախքը § 50 մէջ
դրուա և առաջարկեց որ հաճին այդ ծախ-
քը զոյցել: Ուրախովի է թէ Տիար Միւր
րան Գարակէօզեան, անդամ հոգարար-
ձութեան, յանձն առաւ այդ ամբողջ
ծախքը վճարել: Տիար Գարակէօզեան ու
րիչ մասնաւոր նուիրատուութիւններ ալ
ըրաւ:

Ժողովողներն առատաձեռն նուիրա-
տուութեամբ միայն նստարաններու իրր
ծախք զոյցացաւ § 420 տօլարիսկ 400 տօլար
ևս Սեղանի, ինչոյ, Եկեղեցական այլ և այլ
անօթից գոյից ընդ ամէն 800 տօլարէն ա-
ւելի:

Ահա Սրբազան հայր! ժողովուրդը
արժանի և գործնական ապասկը այսպէս
Լուսայ այն խելայեղ և այլատեքած ա-
րարածներուն՝ որոնք Եկեղեցին, կրօնը
և կրօնականը իր թէ ժողովողին ուս-
քին տակ ձգելու ճիշդագիտ յաւակնու-
թիւնը ունին: որոց գործած զէնքե-
րը են մի միայն հայհոյանք, զրպարտու-
թիւն և խելացոր շարլաթանութիւններ:
ՀԱՅՍՏ

ՔԱՂԱՔԱՊԵՍ

ՉԻՆՆԱԼԻ ԿԱՉՍՍԵՐՊՈՒԹԻՒՆ ՄԸ

Լեհաստանի Լոց քաղաքին մէջ տա-
րիներէ իվեր ընկերվարական լրագիր մը
կը հրատարակուէր ու Ռուս սոսիկանու-
թիւնը անհարող կըլլար անոր շըրջաբ-
ութիւնը արդիւնք: Ապրիլ 6 ին մէջ կը
կերթայ ու սոսիկանութեան կը մասնէ
թերթին հրատարակուած ահալը, ուր ան-
միջապէս կը ձերբակալուին 8 հոգիներ:
Հակառակ ատոր՝ յաջորդ օրը լոյս կը տես-
նէ թերթը որուն մէջ յայտարարուած էր
դաւաճանի անունը: միւս առաւօտ մաս-
նիչին գիտիլ կը գտնուի փողոցին վրայ:

Սպաննութեան Փորձ Ուէլի
Իշխանին վրայ

Ուէլի Իշխանը և Իշխանուհին Տա-
նիմարքա կերթային Թագաւորին ծնն-
դեան 82 րդ. տարեդարձին ներկայ գըտ-
նուելու: և Պրուսիայի մէջ 16 ասարկան
պատանի մը ատրճանակով կրակ կընէ
Անգլիոյ Թագաժառանգին վրայ: Հարու-
ածը կը վրիպի սղան ձերբակալուած է:
Տղուն խոստովանութեամբ, իր այս ոճի-
րին շարժառիթը եղբէր Անգլիոյ Պօէր-
ներուն դէմ մղած պրտերազմը:

ՄԱՎԱԿԱՆ ՏՈՒՆ ԵՄԱՍՍԻԱՆ ԸՆՏՐՈՒՄ

Միացեալ Նահանգք արեւելքէն ա-
րեւմուտք: Հիւսիսէն հարաւ ելեքաք-
րական ցեղութեմը ազդուելու: Երեւոյ-
թն առաւ: Երբ Լուր ելաւ ու հաստա-
տուեցաւ թէ Մովսէսը Տուր որչա՞ծ է
նախագահական ընտրելի ներկայանալ:
Հասարակութիւնը հետաքրքրող ամե-
նէն կարեւոր խնդիրն այն էր թէ ո՞ր կու-
սակցութեան կողմանէ է որ ընտրելի պի-
տի նշանակուի: Մովսէսը կը յայտարար-
էր թէ ինքը ազատ ընտրելի պիտի
ըլլայ: և ուստի իր քուէները խոսն, եր-
կու կուսակցութեանէ ալ պիտի սպասէ:

Բիւրզլիք կուսակցութիւնը նախա-
գահ Մաքիմիւն և Տիմօքրիթիւնը Պըրա-
յընը վերընտրելի պիտի յայտարարեն:
ուստի Մովսէսին քուէ պիտի տան երկու
կուսակցութեանէն յիշեալ երկու ընտրե-
լինքներն ալ դժգոհ կընող տարբեր:

ԲԷՆԹՐԻՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բէնթրքի նահանգին այս տարուան
կառավարչի ընտրութիւնը խիստ շփոթ
եղաւ: արդէն իշխանութեան գլուխը ե-
ղող կառավարչ Ռէյլըր (Բիւրզլիքեան)
ինքնինքը վերընտրուած համարեց, մինչ
Տիմօքրիթիւնը կը պնդէ ին թէ քուէի օ-
րինական մեծամասնութիւնը ստացեր է
ինքնց ընտրելին Կոպէլ: Բիւրզլիքեան-
ները իրենց պահանջը յանդիպեցնելու հա-
մար Կոպէլի դէմ դաւ նիւթեցին ու
զայն նահանգաւորներին սանդուխ-
ներուն գլուխը գնդակահարել սուրն:
Կոպէլը զարնուելուն պէս, կառավա-
րիչ Ռէյլըր նահանգատունը զինուորնե-
րով պաշարեց: սյոյու նա կարող եղաւ
թէ պահանջութեան դաւաճանները անե-
րեւութացուցնելու (ինչպէս հիմա կը հաս-
տատուի թէ ինքը ուղղակի մատ ունի
կըր որ այդ դաւաճարութեան մէջ) և թէ
կարող եղաւ նահանգին նիւթական ուժը
իւր ձեռքը ունենալու:

Որովհետեւ թէ նահանգին ներկայա-
ցուցիչներուն տանը մէջ Տիմօքրիթիւնը
մեծամասնութիւն կը կազմեն և թէ դա
ստուորներուն մեծ մասն ալ իրենց կու-
սակցութեանէն էին: նահանգին օրէնսդրա
կան աւժը իրենց ձեռքն էր, հետեւաբար
անոնք Կոպէլին մահուան անկողնին քով
ժողով կազմեցին ու օրինական երգումը
տալով զայն կառավարիչ հռչակեցին:
սակայն քիչ օրէն Կոպէլ մեռաւ, ուստի
անոր երկրորդը կառավարիչ հռչ-
ակեցին:

Ըսելի Յունիս 30 էն իվեր Բենթը-
քի նահանգին մէջ երկու կառավարիչ-
ներ կան:
Տեղի սղութեան համար մնացեալ
մանրամասնութիւնները, որ շատ հետա-
քրքրական են, յաջորդ թուով կու-
սանք:

Թիւրքի Պատերազմական
Պատրաստութիւն կը Տեսնէ
Հակառակ Ռուսիոյ Թիւրքիոյ դէմ

անսած յայտնի, փութ կոտ ու խոշոր պա-
տերազմական պատրաստութիւններուն,
Թիւրքիա հանգարտօրէն կը պատրաս-
տուի պատերազմի:

Հաստատուած է թէ Սուլթանը ամիս
մը առաջ իրատէով մը հրամայած է որ
երկրին տարբերու հարիւրէն վեցը ուղ-
ղակի պատերազմական նախարարութեան
գանձը երթայ: Ըստ հրամանին՝ պէտք է
որ նոր կազմուած զօրադունդերը զի-
նուին նոր հրացաններով ինչպէս և հին
զէնքեր ունեցող զօրադունդերուն նորա-
գոյն զէնքեր հայթայթուին:

Խեղճ Թիւրքը Մամլոյ Մէջ կը ձգմեն:

Սուլթանին իր ներքին գործերը սը-
նօրինելու իրաւունքը չարուիր:

Կ. Պոլսոյ Դեսպանները Սուլթանին
հաւաքական զեկուցագիր զրկելով անոր
ազգարարներ են թէ եթէ Թիւրքիա ներ-
մուծեալ սպրանքներու վրայ մաքսի ա-
ռուելութիւններ նշանակէ՝ առանց կան-
խաւ եւրոպական պետութեանց հաւա-
նութեանը դիմելու, չպիտի ընդունուին:

Յարգ Պետութիւնները զրկած չէին
Թիւրքիան իր իրաւաստութեանէն, որ ունէլ
իր երկրին մէջ ըստ հաճոյս օրէնք հաս-
տատուելու և յաւելում նշանակելու ստու-
բերու մասին: Հիմա որ այդ իրաւուն-
քէն զայն կը զրկեն. այդ կը նշանակէ
թէ պետութիւնները մտադր են Թիւր-
քիան իրենց Գերիշխանութեանը տակ
նկատել: ու անոր հետ ըստ այնմ վա-
րուիր:

ՊԱՏԵՐԱԶ ՄԸ

Հարաւ: Ափրիկէի մէջ իրաց վիճակը
կրկին փոխուած է: պատերազմի ատու-
ածը վերստին Պօէրներուն ժպտիլ կընու-
սի, Թրանսվալի և Սրէնճի բոլոր զօր-
քերը հաւաքուած բանակած են Պլումֆօն
թէնի մօտ և հոն Լօրա Բօպէրթի վը-
րայ յարձակում գործելու դիրքը աւած
են: մի քանի փոքրիկ յաղթութիւններ
տարին արդէն: Երկու անգամ մի քանի
հարիւրաւոր Անգլ. զօրք և թնթանօթ-
ներ գրաւեցին: սյոյսը Լուր կայ (թէ և
ոչ հաստատուած) թէ իր 1500 Անգլիա-
կան զօրք Միքսալֆօնթի մէջ բոլորու-
վին պարտուել են: որոց 600 սպաննու-
եր կամ վիրաւորուել ու մնացեալք գե-
րի ինկեր են: Զօր. Պրուսիան 2500 զօր-
քով ուրիշ տեղ մը Պօէրներէն պաշտու
եր է, անոր ալ կացութիւնը վատաբար
է: Մէքսիկէի մէջ Անգլիական զօրքը
պաշարուած է ազատելու համար դացող
Գնդալ: Փայմը կրկին յետո մղուած է:
ու պաշարեալք անօթի են: Լօրա Բօ-
պէրթի զօրքերը ձմեռնոց հանդերձ չու-
նենալ նաեւ համար մեծ թուով կը հիւ-
անդանան: և իւր բանակը շարժելու հա-
մար բաւական զրատ չունի: ահա այս
պատճառներով իր տեղէն չկրնար շար-
ժիլ, և Պօէրներուն բանակը իր քթին
տակ փոքրիկ վնասներ տալով կը պառ-
նայ ահաւոր յարձակում մը գործել:

Այսու ամենայնիւ Պօէրներուն կող-
մանէ ալ վնասներ կրուած ու գերի ին-
կած են:

Ռուսական Աճենթներ Մակեդոնոյ

Պուլկարիոյ և Սերպիոյ մէջ կը շըջին
գրգռութիւն տարածելու: յիշեալ երկք
երկրներն ալ ներկայիս յայտնի կերպով
ուղղակի Ռուսական ազդեցութեան տակ
կը շարժին: Աւստրիոյ կայսրը արտաքին
գործոց նախարարին հետ կերթայ Գեր-
ման կայսեր հետ սեփուելու, կը կար-
ծուի թէ այս սեփուելութեան պատճառ
տուած է Ռուսիոյ կողմանէ Պալքանի մէջ
խաղցուած խաղերը, որոց մասին խոր-
հըրդակցելու են:

Ս Ո Ս Լ Մ Ը

Չայն Հայրենեացի անցեալ թուով տե
ղեկագիր մը. Կ. Պ. Ստորագրութեամբ
կը յայտարարէր թէ իր Ռուսորի շըրմըն
փողոցի ճաշարանին մէջ բախտախաղ կը
խաղցուի: և թէ ճաշարանատէրն Փօլ
կարապետեան ևս խաղցող է. այժմ ստու
գիւ կրմանանք և ուրախութեամբ կը յայ-
տարարենք թէ այդ երկու ամբաստանու
թիւններն ալ անհիմն են: խաղցողը փա-
լա ըսուած արարածն է որ կը բնակի յիշ-
եալ ճաշարանը սակայն հոն խաղցած
չէ: նա իր որսերը ուրիշ տեղեր կը
գտնէ:

Ս Ո Ս Լ Մ Ը

Չայն Հայրենեացի անցեալ թուով տե
ղեկագիր մը. Կ. Պ. Ստորագրութեամբ
կը յայտարարէր թէ իր Ռուսորի շըրմըն
փողոցի ճաշարանին մէջ բախտախաղ կը
խաղցուի: և թէ ճաշարանատէրն Փօլ
կարապետեան ևս խաղցող է. այժմ ստու
գիւ կրմանանք և ուրախութեամբ կը յայ-
տարարենք թէ այդ երկու ամբաստանու
թիւններն ալ անհիմն են: խաղցողը փա-
լա ըսուած արարածն է որ կը բնակի յիշ-
եալ ճաշարանը սակայն հոն խաղցած
չէ: նա իր որսերը ուրիշ տեղեր կը
գտնէ:

Մեր Գործակալներէն կը խնդրենք որ Հասկին մինչեւ 32 րդ թիւը մեզ Հետ ունեցած Հաշիւներն մաքրել:



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Մ Ե Ր Ն Ո Ր Հ Ա Ս Ց Է Ն
Ս . Տ Ա Մ Պ Ո Ւ Բ Ա Ճ Ե Ա Ն
Նիւ-Եորք 509 2 րդ . Ավինո

Տեղական և Արևելեան բազմաթիւ անկողնակալներ, լաւագոյն տեսակ ընդգեղեններ, եղանակին Համեմատ բանջարեղեններ և առօրեայ թարմ միս: Հայկական պանիրաւունար 13 սէնթ մեծաբանակ գնողաց 12 սէնթ. Աւստրի պատուական Պղլուր և Մեծած փաւունար 3 սէնթ մեծաբանակ գնողաց Համար 2 1/2, 2 1/2 ֆայտուղ (զէյթուն) փաւունար 10 ս. մեծաբանակ գնողաց մասնաւոր զեղջ կընեմ, 5 փաւունար քէն սոյսոյ Համար 25 սէնթ մեծաբանակ գնողաց 20 սէնթ Հատար: Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, աղբ գորած եսփրաղ, ընտիր կորկոս, անթաղ Հալլաթի, կանանչ զէյթուն: 2 1/2 ֆայտուղ (քէն) (ընտիր տեսակէն) մատուցանի լոքում տեսակներովը, ոսպ աղցուած կամ շաղցուած, սուժար, սիսեռ Պոսոյ խաշար պանիր, Հէպլէպի Հաքարի տեսակներով, քիմիոն, անասուն, պատուական խունկ. աղբոր ալիւրէ Հաց 2 Հատը 5 սէնթ, կայն... Եւ մատուցող եղած յանձնարարութիւնը փութով և քիչ վարձով կը կատարենք մեր յատուկ կառքով: Վճարու մեքը կանխիկ են և ոչ ապառիկ:

ԱՌ Ձեռն ԲԱՌԱՐԱՆ
ԲԱՌԱՐԱՆ
ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՅՆԵՐԷՆ

Գարունը նոր կեանք կը բերէ Դեռապէս, Ս. Չարիկը նոր կեանք կը բերէ բարոյապէս: Սոյն Բառարանն այ նոր լեզու մը կը բերէ ձեր տունն իրապէս: զինքն է \$ 2.50:
Չափի առթիւ պիտի զրկենք որտաքոյ կարգի զեղջով մը, այն \$ 1.75 ի առթիւն օգտուի ուղղով թող Հասկի քիմիա առ Պ. Ռ. Թորոսեան
564 Clinton Avenue,
West Hoboken, N. J.

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ՄԻՀՐԱՆ. ՏԱՄԱՏԵԱՆԻ
ԵՐԳԵՐ
ՍՉԿԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ
ՍՐԴԻ ԿԵԱՆԻԷ
Գին 25 ԱՏԵԻԹ
Ուրիշ քաղաքներու Համար փոստի ծախքը իրենց վոյս է:
Դիմել՝
S. RUSDIKIAN,
P. O. Box 46, Station A,
WORCESTER, MASS
Նաև
Պոստոն Պ. Ա. Ալլանազի և
Բրոզիտէն Պ. Մ. Տէր-Պողոսեանի քով:

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԴ
Ճաշակի յարմար պատուական ապուրստ (Պայտէրի Պատրմայ) կը պատրաստեմ. գինն է՝ փաւունար 35 սէնթ. վաճառման կեդրոնասեղին՝
Ս. ՍԵՄԷՐՃԵԱՆ
113 TYLER ST BOSTON MASS.
Մ Ե Ր Ն Ո Ր Հ Ա Ս Ց Է Ն
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ . ՀՐԱՏ . ԸՆԿ.
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
AMERICAN HAI PUBLISHING CO.
P. O. Box 379,
WORCESTER, MASS

ԱՉԴ
Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ՛ Պատժոնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԷՆԵՐ ՉԱՓԱՌՈՐ ԳՆԵՐՈՎ:
Յանձնարարութիւնը կը կատարուին փութով և խնամով:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՍՄՈՒԷԼԵԱՆ,
ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱՉ
Մեր Հացէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՓԱՉԵԱՆ
NEW YORK
LIFE INSURANCE CO.,
ՆԻՒ-ԵՕՐԻ ԿԵԱՆՑ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գործակալութիւնը ըստանձնած է, և անձամբ կամ նամակաւ իրեն զինողները կապահովագրէ ճիշդ և ուղղակի մանրով:
Նիւ-Եորք կենցաղ ապահովագրական Ընկերութիւնը աշխարհի ամենէն մեծ միջազգային ապահովագրական ընկերութիւնն է, 82 կառավարութիւնէ ծանցուած և անոնց Օրէնքներով վաւերացուած:
Այս նիւթին վրայ պատրաստած է՝ Համառոտ անտրակ մը գոր կը զրկեմ ամեն անոնց, որոնք կը շահագրգռուին այս խնդրով և կը փափաքին որոշ տեղի կաթիւններ ստանալ:
G. H. Papazian,
15 Temple Place,
Boston, Mass.

Խ. Թ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՎԱՐՁՈՒ ՓՈՐՁԱՌՈՒ ԴԵՐՁԱԿ
Պատուէրով Հանդերձ կը շինենք, թէ Արանց և թէ Կանոնց: Նաև կը ներկենք, կը մաքրենք, կարտուկենք ու կը նորագենք:
Փութով ու շատ ատան:
7 Պրիմ Փողոց
Յրոնթ Փողոցի անկիւնը
Ուսար
Իրիկունները բաց է:

ԿԸ ՓՐԷՏԱՌՈՒՆ
Կը փրկուան Պրեք. Հասկի Յարի Աչճեան և Տիգրան Վարդիկեան (Պարբերիցիներ) ատանք 97 ին ընկերակցութեամբ Ուսարի մէջ Յաւանթէյն Փողոցի Ճաշարանակոնքին էին: Կըսուի թէ՛ առաջինը Նիւ Եորք, իսկ երկրորդը Պոսթոնի շրջակայքէն կը բնակի: Հացէնքը քիտայի Հայրենակիցներէ կը խընդարտ տեղեկացնել նախկին Նպարա վաճառեղիայ Կ, Գոստապեանի:
242 1/2 FRONT ST.
ՈՒՍՏՐ ՄԱՍ.


Գործի Լաւ Պատեհութիւնը
Կուգամ յայտարարել յարգոյ Հայրենակցաց թէ Փրոֆիտէն 304 Տեմպլ Ստրիթի խանութն կուգամ ծախել ուրովհետև ուրիշ խանութ մը բացած եմ և շեյ կընենք երկու խանութ բանցուցեն: Այս խանութը 12 տարիներէ ի վեր Ստրիթի խանութ եղած է և կը վստահացնեն որ գործը զիտցող սափիչ մը կընայ շար. թական 12 Տօլար շահէլ. ծախել ողիպուած ըլլալով զինք շատ ատան պիտի ընեմ: Մանրամասնութեանց Հաճար զիմեցէք ա՛:
Պետրոս Կըչագճեան
724 Վէսթ-Մինիսթր փողոցին
ԱՉԴ
Այս երկէն մեկնելու նպատակով երեք տարիներէ ի վեր Հաստատած կօշիկի խանութս կը ծախեմ ամէն տեսակ նոր կօշիկ կը ծախուի և Հիներ կը նորոգուին աղաս գործ ընել փափաքողներուն և արտաւարութիւնն է որ տասիւնան յաջող գործ ընելու կընայ Հաստատուի անոնց մէջ որք յաճախ այցելած մեր խանութը. արհեստ չղիտցողներու կը սորեցնեն ասպարէզ ունեցող և ապահով գործ:
Դիմել
Ա. Մ. ԺԱՄԿՈՉԵԱՆ
623 Հարիսըն Ավինո
Պոստոն Մաս.

ԿՈՒՉԷՔ ԴՐԱՄ ՓՈՒՍԿՐԵԼ
Դիմեցէ՛ք Ա՛:
Սարգիս Գ. Սարաֆեան
1060 Փ. Օ. Պօքս, Ուսար, Մաս.
Դրամ կը փոխադրենք Թիւրքիոյ լոբոր քաղաքները: Կեդրոնասեղին է Պարբերք, Տեար Յովհաննէս Պարբերեան, որ երկար տարիներու գործունէութեամբ և վարկով Հանրածանօթ է և Կ. Պօլիս Տ. Գէորգ Պարբերեան: Մեր Գործակալներն են. Մալաթիա Սարգիս Պօնտուգլեան. Չմշկածակ՝ Մէյրիկէյր Ինճէյրեան. Բալու՝ Գարեգին Քիւրճեան. Չնքուշ՝ Յակոբ Տաղաիկէլեան: Թիւրքիոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ զրամ կը փոխադրենք Պարբերգի միջոցաւ:
Մարտէյի թէ Հեռագրով և թէ նամակով զրամ կը փոխադրենք և նաւային տոմսակներ կուտանք:
Ուսարի մէջ կը վաճառենք պամես սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ Տանկական ապրանքներ:
Պանութիս Հացէն է՝ 14 1/2 Արջ. Սթ. Ուսար. Մաս.
ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ. — Մեզ Գրամ զրուկիս է Մընի Օրտորով, կամ Պանքայի շէքով:

ԴՐԱՄ ԿԸ ՓՈՒՍԿՐԵՆՔ
Ամերիկայի Հայ քաղաքականութեան կուգամ յայտարարել որ Հայրենիք գրամ փոխադրելու զիւրուքիւն ընծայելու համար, փոխադրի նոր գործով սկսած եմ ի Պօսթօն շատ մը բարեկաններու ու ծանօթ Հայրենակիցներու թախանձանց զոյացում ապու. աւերորդ է ոչինչ գովեստներ ընել Պարբերգի ինչպէս նաև Տիգրանակիցի մէջ Հաստատուած Պէրպէրեան եղբարց ատն վարկին ու վստայութեան նկատմամբ. ինչ որ արդէն երկար տարիներէ ի վեր կը վայելեն, պէտք եղած վստահութիւնն ու վարկը գործի նրապարակի վրայ: Գործը պիտի Հաստատէ ու վերայէ զայ, և այս կամ բնակութեամբ կընայ յայտարարումս անոնց, որք կուզեն Փ. գրի գործին ձեռն Ծառ. 1. \$450 կը կուտանք:
Մասնաւոր գործակալներն ունինք Պարբերք, Մալաթիա, Տիգրանակից, Սերասսիա, Հայէպ, Կ. Պօլիս և Մարսիլիա ինչպէս ուրիշ այլ և այլ քաղաքներ: Մարսիլիայէն կընդհանրու գրամի և այլ պէտքերու մասին խնամք և զիւրութեան միջոցներ կընձնենք: Հայտատու քաղաքներու զիւրութիւնն ընծայելու Համար երկու գործակալներն կը նշանակեմ որոնց կընան. Գրիգոր Մարգարեան. 157 Սթ. Մ. Նիւ Եորքի և Նիւ Ճըրզիի Պ. Մարտիրոս Թաշճեան 251 Ուիլմսթ. Նիւ Եորք
Ինձ նամակ և զրամ զրկողներ պէտք է Հեռուեալ Հացէնով թղթակցին՝
P. O. Box 2652. Իսկ զիւս անձամբ տեսնել ուղղուներ կընան զիմե՛լ
344 Cambridge St.,
Boston, Mass.
ՅՈՎՀ. Մ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

ՃՈՒՆ ԵՒ ՀԱՐՈՒՍ ՃԱՇԱՐԱՆ
Թ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ
Յիշեալ ճաշարանն որ կը գտնուի 11 քարլ փողոցը. ամէնէն Լաւ և քնար կերակուրներ կը պատրաստուի Համախորհրդաց Համար 12. 13. տեսակ մեղքներով և սովորուողով Հանդերձ, նոյնպէս փելերն կը պատրաստուի 4 տեսակի փայ միս պանիր և մրգեղեն. Հացը ուզածուէն շափ առատ է, ուստի ոչնչ Հայտարարութեամբ կը ծանուցանեմ յարգոյ Հաստատութեան ուղի որ կուզէ Համեղ և ընտիր կերակուր ուտել կընայ փորձել. աղքատները նաև կը կերակուրուին ճիւղս կանօնի: Սենեակ ուղղաց Համար յաւ մաքուր անեակներ \$ 2 ուտել և պառկել իսկ \$ 2.25 սենեակին Համեմատ: Փորձեցէք և գոհ պիտի մնանք:
Ճաշարանապետ
Թ. Մամիկոնեան

Ա. Ն. Ա. Հ. Ի. Տ.
Հանդէս Ալլապին, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրդ. տարուալ Բաժանորդագրութիւնը:
Հացէ
ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ,
6 Բլէս Տը Լ'Օտլօն
Բարիք



ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ ԵՂՐԱՐԻ
Օղիլի և Մասիլիայի Պատրաստողներ. Արևելեան օղիլի և Մասիլիայի անոյրանի և միակ գործարանը ունինք Մ. Նահանգաց կառավարութիւնէ վաւերացուած:
Միայն պատուական խաղող է և շամիլէ կը պատրաստենք: Մի խմէք օտար և անտարբեր խմելիքներ. որ չիլիտուիք: Նմանցէք Հայրենիքի գուա օղին և մասիլիայն, որ խնամքով կը մասալարարենք:
Ինչ որ և է Հայ մը մտնաւոր Հայ բժիշկին կընան վաւերացնել ամենափոքրիկ խաղաղութիւն մը մեր բնակչեաց մէջ, պատրաստ ենք իրենց փորձեալն Համար բոլոր ծախքեր և 500 սոլար ալ կըսու վճարել:
Պատրաստողներ կընան ստանալ օղի և Մասիլիա 111 Summer St. ըմպելաց մեծ վաճառատունէն:
Ուրիշ քաղաքաց Հայեր կընան քիմի կամ գրի ուղղակի մեր գտարանը
Abraham Bro's
20-22-24 Back St.
Providence R. I

ԱՉԴ
ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ
Ուսարի մէջ երկար տարիներէ ի վեր Հաստատած ենք մեր յատուկ պալլուր գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենայն ցորենէ կը պատրաստենք ընտիր պալլուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յարկաւ կընենք: Եւ մասիլիայէն և ճաշարանակոնքներու գնահատութեան արժանացած է: Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր մեծած և կորկոս:
Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և տարածաւոր կերակուր ինչպէս պալլուր և մեծած ունենալ, թող զիմէ ուղղակի մեզ: Ապապրանքներ փութով և կատարուին: մանրամասն տեղեկու իրենց Համար պէտք է զիմե՛լ Հեռագր Հացէն ինչ: Ուսար, Պոլոցուրի Միացեալ Ընկ. 151 Ինիսթր. Սթ., Ուսթըր Մասս. Տանկական տեսակ տեսակ ապրանքներն ալ կը ծախենք:
ՄԱՐԹԻՆ ԳԻՆՕ
ՀԱՅ
Վաճառանոց տեսական ամեն կարգի կուս կարտուաց:
Հայերը ասկէ պատշաճաբոյն տեղ ին կընար գտնել, գնելու, մահճակալ, մեթիս, սեղան, ջեպոց, կարպետ և որ ի կարգին:
Հացուի Լ.
MARTIN KEENOW
79 Green St.: Albany N. Y.

ՀԱՅ ԳՐԱՎԱՅԱՌԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱՂՈՒԹԻՒՆ
Պօսոյ, վեներտիկի, Մ. Մամուրեանի և Տիգրիս Բաֆֆիլիէա մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուններէ ալ գրքեր բերել տպու միջոցները ձեռք բերած ըլլալով կուգամ գրատէր Հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատրաստ եմ. քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանց շարք մը:
Մեծ քանակութեամբ գրեանքներու մասնաւոր գեղջ կընենք:
Դիմել իւր ՊԵՏԻՇԵԱՆ
390 Փ. Օ. ՊՕՒՍ
10 ՎԷԼ ՄԷՍ.